

Զանգվածային լրատվամիջոցների և տեղական հասարակական կազմակերպությունների համար

Համագործակցության հայտարարություն

Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա (ԱՍԲԱ) հիմնադրամը «ԵՄ-ն քաղաքացիական հասարակությանը. Էներգաարդյունավետությունը Հայաստանի համայնքներում» ծրագրի շրջանակներում **հայտարարում է համագործակցության հրավեր** Կոտայքի մարզում գործող հասարակական սեկտորի կազմակերպությունների ու զանգվածային լրատվամիջոցների համար՝ մարզի համայնքներում հանրային իրազեկման և համայնքային նախաձեռնությունների խթանման համար՝ ուղղված Էներգաարդյունավետության խնդիրներին:

Հետաքրքրված կազմակերպությունները կարող են մասնակցել նախամրցութային փուլին՝ ներկայացնելով կազմակերպության **հետաքրքրության մասին նամակ հետևյալ էլ. հասցեին՝ asbafoundation2@gmail.com**: Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018 թ.-ի մարտի 7-ը, ժամը 18:00 ներառյալ:

**Մանրամասների համար դիմել ԱՍԲԱ հիմնադրամ՝
Հեռ.:(+374)-10-581 604, Վեբ կայք: www.asba.am,**

Ներկայացվող նամակի հետ նշել հետևյալ տեղեկատվությունը.

1. Կարճ տեղեկատվություն կազմակերպության մասին (գրանցման տարեթիվ, առաքելություն, անձնակազմ):
2. Իրականացված նմանատիպ ծրագրեր (տարածաշրջան, ֆինանսավորման ծավալ, շահառուներ):
3. Կազմակերպության առկա ռեսուրսները, որոնք կնպաստեն ծրագրին մասնակցելու համար (գրասենյակ, գույք, տրանսպորտային միջոց):
4. Հակիրճ հիմնավորում ծրագրին միանալու մասին:
5. Կազմակերպության գործընկերների և աջակից կառույցների վերաբերյալ տեղեկատվություն:
6. Տեղեկատվություն՝ համայնքների և ՏԻՄ-երի հետ աշխատանքային փորձի վերաբերյալ:
7. Լրացուցիչ այլ տեղեկատվություն, որը կնպաստի հիմնավորելու ծրագրին մասնակցելու հայտը:

Ընտրված կազմակերպությունները հնարավորություն կստանան բարելավելու հանրային իրազեկման իրենց կարողությունները և ՏԻՄ-երի հետ արդյունավետ համագործակցության ունակությունները, ինչպես նաև նրանք կկարողանան մասնակցել ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրերի մրցույթներին:

Ծրագրի համառոտ նկարագիրը

Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա հիմնադրամը համագործաքցելով Հոլանդիայի, Չեխիայի և Գերմանիայի գործընկերների հետ, Հայաստանի Հանրապետության հինգ մարզերում, Եվրոպական Միության ֆինանսավորմամբ իրականացնում է՝ «ԵՄ-ն քաղաքացիական հասարակությանը. Էներգաարդյունավետությունը Հայաստանի համայնքներում » ծրագիրը:

Ծրագրի նպատակն է - գարգացնել տեղական հասարակական կազմակերպությունների և գանգվածային լրատվամիջոցների էներգաարդյունավետությանն ուղղված հանրային իրազեկման կարողությունները, որը հնարավորություն կտա աշխատել քաղաքային և գյուղական համայնքներում`

- բարձրացնել բնակչության իրազեկվածությունը էներգաարդյունավետության ձևաչափերի և նրանց արդյունավետ կիրառման նպատակով.
- համախմբել համայնքային ռեսուրսները էներգաարդյունավետության համայնքային նախաձեռնությունների համար, համագործակցելով տեղական իշխանությունների և մասնավոր ընկերությունների հետ.